ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԴԱՇՏԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

09.08. 2019թ
N_53_

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊՐ-Ն Գ.ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի մարզպետ,

Ձեզ ենք ներկայացնում Դաշտաքար համայնքի 02.08.2019 թվականի ավագանու թիվ 6 նիստի արձանագրությունը:

Առդիր 5 էջ

Համայնքի ղեկավար ՝ Ն. Մալխասյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԴԱՇՏԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

2019 թ-ի օգոստոսի 2-ին, ժամը 11-ին Դաշտաքար համայնքում տեղի ունեցավ ավագանու թիվ 6 նիստը: Նիստին մասնակցում էին ավագանու անդամներ.

Աբրահամ Աբրահամյան
Լյուդվիգ Այնազյան
Արմեն Աթոյան
Արամ Մալխասյան
Անգին Սարգսյան

Համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ՝ Հ. Հակոբյանը
Նիստը նախագահում էր համայնքի ղեկավար՝ Ն.Մալխասյանը
Նիստը քարտուղարում էր աշխ. քարտուղար՝ Ա. Վարդանյանը

Օրակարգում՝

1. Օրակարգը հաստատելու մասին հարցը
2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դաշտաքար համայնքի մանկապարտեզի կանոնադրությունը հաստատելու մասին հարցը.
3. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դաշտաքար համայնքի մանկապարտեզի գույքը օգտագործման իրավունքով տրամադրելու մասին հարցը.
4. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դաշտաքար համայնքի մանկապարտեզին անվանում տալու մասին հարցը.
5. Համայնքի 2019թ-ի բյուջեում փոփոխություն կատարելու մասին հարցը.
6. Համայնքի վարչական տարածքում ընդգրկված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալությամբ տրամադրելու համար համաձայնություն տալու մասին հարցը.

*(Զեկ՝ Ն. Մալխասյան)*

1. Լսեցին նիստի օրակարգը հաստատելու մասին հարցը.

*(Զեկ՝ Ն. Մալխասյան)*

Արտահայտվեցին ավագանու անդամներ Անգին Սարգսյանը, Արմեն Աթոյանը և Լյուդվիգ Այնազյանը

Լսելով զեկուցողին և արտահայտվողների կարծիքները, որոնք իրենց խոսքում պաշտպանեցին համայնքի ղեկավարի առաջարկությունը
Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական Ինքնակառավարման Մասին» օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով
Դաշտաքարի ավագանին որոշեց.

ՈՐՈՇՈՒՄ 15

Հաստատել 02.08.2019 թվականի ավագանու նիստի օրակարգը.

| | |
|---|---|
| Աբրահամ | Աբրահամյան |
| Լյուդվիգ | Այնազյան |
| Արմեն | Աթոյան |
| Արամ | Մալխասյան |
| Անգին | Սարգսյան |

2.Լսեցին--- . Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դաշտաքար համայնքի մանկապարտեզի կանոնադրությունը հաստատելու մասին հարցը.

(զեկ Ն. Մալխասյան)

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 18 -րդ հոդվածի 28-րդ կետով՝
Դաշտաքարի ավագանին որոշեց.

ՈՐՈՇՈՒՄ 16

Հաստատել համայնքի ղեկավարի կողմից ներկայացված Դաշտաքար համայնքում նոր կառուցված համայնքային ոչ առևտրային կազմակերպության՝ մանկապարտեզի կանոնդարությունը համաձայն N1 հավելվածի:

3.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դաշտաքար համայնքի մանկապարտեզի գույքը օգտագործման իրավունքով տրամադրելու մասին հարցը.

(զեկուցող՝ Ն. Մալխասյան)

Արտահայտվեցին ավագանու անդամներ Արմեն Աթոյանը և Արամ Մալխասյանը

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի՝ ավագանին որոշեց.

ՈՐՈՇՈՒՄ 17

Համայնքի ղեկավարի կողմից ներկայացված Դաշտաքար համայնքում նոր կառուցված մանկապարտեզի շենքը, որպես անշարժ գույք տրամադրել մանկապարտեզին օգտագործման իրավունքով, իսկ N2 հավելվածում նշված գույքը տրամադրել մանկապարտեզին սեփականության իրավունքով:

4. Լսեցին--- Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դաշտաքար համայնքի մանկապարտեզին անվանում տալու մասին հարցը.

(զեկուցող՝ Ն. Մալխասյան)

Արտահայտվեցին ավագանու անդամներ Անգին Սարգսյանը, Լյուդվիգ Այնազյանը և Աբրահամ Աբրահամյանը

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 22-րդ կետի՝ ավագանին որոշեց.

Դաշտաքար Համայնքում նոր կառուցված մանկապարտեզը անվանել <<ՀՀ Արարատի մարզի Դաշտաքար Համայնքի մանկապարտեզ>>:

5. Լսեցին — Համայնքի 2019թ-ի բյուջեում փոփոխություն կատարելու մասին հարցը.

(զեկուցող՝ Ն. Մալխասյան)

Արտահայտվեցին ավագանու անդամներ Լյուդվիգ Այնազյանը և Արամ Մալխասյանը

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի՝ ավագանին որոշեց.

ՈՐՈՇՈՒՄ 18

1. Վարչական բյուջեի Պահուստային ֆոնդի գործառնական դասակարգման ծրագրի 4891 հոդվածից հատկացնել Վարչական բյուջեի կառավարման մարմնի պահպանում գործառնական դասակարգման ծրագրի 4241 հոդվածին՝ 220 000 ՀՀ դրամ:
2. Վարչական բյուջեի Պահուստային ֆոնդի գործառնական դասակարգման ծրագրի 4891 հոդվածը սահմանել 780 000 ՀՀ դրամ:

Աբրահամ Աբրահամյան

Լյուդվիգ Այնազյան

Արմեն Աթոյան

Արամ Մալխասյան

Անգին Սարգսյան

**6.** Լսեցին-- Համայնքի վարչական տարածքում ընդգրկված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալությամբ տրամադրելու համար համաձայնություն տալու մասին հարցը.

(զեկուցող՝ Ն. Մալխասյան)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 14.01.2010թ-ի N 16-Ն որոշման պահանջներով.

Դաշտաքարի ավագանին որոշում է.

ՈՐՈՇՈՒՄ 19

Տալ համաձայնություն Դաշտաքար համայնքի վարչական տարածքում ընդգրկված համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության

(ծածկագիր 03-034-0120-0001) 1.2 հա III կարգի վարելահողը մրցութային կարգով տրամադրել վարձակալության 25 տարի ժամկետով՝.

Վարձավճարի մեկնարկային գին սահմանել զուտ եկամտի 15 %-ի չափով:

Որոշումն անցավ միաձայն.

Աբրահամ Աբրահամյան

Լյուդվիգ Այնազյան

Արմեն Աթոյան

Արամ Մալխասյան

Անգին Սարգսյան

Ավարտելով հաստատված օրակարգի հարցերի քննարկումները՝ համայնքի ղեկավարը հանդես եկավ հայտարարությամբ և նիստը հայտարարեց փակված:

Համայնքի ղեկավար՝ Ն.Մալխասյան

Աշխ.քարտուղար ՝ Ա. Վարդանյան